ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսների նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչության փորձագետ Մելանյա Հարությունյանի

Փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի մարտի 1-ը ներառյալ ըստ ներկայացված աշխատանքային պլանի իրականացրել եմ հետևյալ գործընթացները՝

- Նոր աշխատակիցների ադապտացիոն գործընթացի ապահովում,
- Կրթական հաստատությունների հետ ակտիվ համագործակցության ապահովում,
- Ուսանողների ուսուցման և զարգացման գործընթացի ապահովում,
- «Պաշտոնական գրագրություն» դասընթացի մասնակիցների տվյալների հավաքագրում և ամփոփում,
- ՀՊՏՀ և այլ բուհերի ուսանողների ուսումնական և հետազոտական պրակտիկաների կազմակերպում,
- ՄՌԿ վարչության աշխատանքային գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով հետազոտական աշխատանքի իրականացում:

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մարդկային ռեսուրսների (HR) կառավարումը խթանում է թիմային աշխատանքը աշխատավայրերում՝ արդյունավետորեն բարձրացնելով աշխատակիցների մոտիվացիան և համապատասխանությունը կազմակերպության (մեր օրինակով՝ նախարարության)՝ արժեքներին: Բացի այդ, թիմային աշխատանքը նպաստում է կազմակերպությունում մի շարք առավելությունների ապահովմանը՝

- Արտադրողականության և արդյունավետության բարձրացմանը,
- Աշխատանքի որակի և ծախսերի բարելավմանը,
- Ներքին մրցակցության նվազմանը,
- Աշխատակիցների հմտությունների զարգացմանը,

- Աշխատանքային միջավայրի համախմբվածության ամրապնդմանը:

Արտադրողականության և արդյունավետության բարձրացում

Կազմակերպությունում թիմային աշխատանքը խթանելու միջոցով ՄՌԿ ստորաբաժանումը կարող է ապահովել արտադրողականության և արդյունավետության աճը: Սա նշանակում է, որ աշխատակիցներն ավելի արագ են աշխատում՝ մեծածավալ նախագծերի վրա, որոնք սովորաբար կարող են շաբաթներ տևել, ավարտելով ընդամենը մի քանի օրում:

Սա կարող է իրականացվել այն դեպքում, երբ թիմային աշխատանքը հնարավորություն է տալիս աշխատակիցներին համատեղ բաշխել աշխատանքը կամ կիսել ծանրաբեռնվածությունը: Այս մոտեցումը նվազեցնում է մեծ ծավալի աշխատանքի ճնշումը յուրաքանչյուր աշխատակցի վրա: Բացի այդ, եթե աշխատակիցը բախվում է դժվարության, թիմային աշխատանքը թույլ է տալիս դիմել գործընկերներին խորհրդի համար՝ ինչը նպաստում է աշխատանքների ավելի արագ և արդյունավետ ավարտին:

Աշխատանքի որակի և ծախսերի բարելավում

Թիմային աշխատանքը նպաստում է աշխատանքի որակի բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը: Երբ աշխատակիցները համագործակցում են, առաջ են գալիս տարբեր գաղափարներ ու մոտեցումներ, ինչը նպաստում է խնդիրների ավելի արդյունավետ լուծմանը:

Ծախսերի նվազեցումը ապահովվում է նրանով, որ թիմային աշխատանքի դեպքում սխալներն ավելի արագ են հայտնաբերվում և ուղղվում: Երբ աշխատակիցը միայնակ է աշխատում, սխալների շտկումը կարող է երկար ժամանակ պահանջել, մինչդեռ թիմային աշխատանքում շարունակաբար կատարվող վերահսկողությունն ու քննարկումները թույլ են տալիս սխալները շտկել առավել օպերատիվ կերպով՝ խուսափելով լրացուցիչ ծախսերից:

Ներքին մրցակցության նվազում

ՄՌԿ ղեկավարի արդյունավետ աշխատանքը կարող է նվազեցնել կազմակերպությունում կործանարար ներքին մրցակցությունը: Այս մրցակցությունն առաջանում է, երբ աշխատակիցները կենտրոնանում են սեփական շահերի վրա՝ անտեսելով կազմակերպության նպատակները:

Թիմային աշխատանքը կանխում է նման իրավիճակները, քանի որ աշխատակիցները սկսում են համատեղ աշխատել ընդհանուր նպատակների համար: Այսպիսով, ՄՌԿ ղեկավարները պետք է մշտապես շեշտեն թիմային աշխատանքի կարևորությունը՝ ապահովելով, որ բոլոր աշխատակիցները գիտակցեն դրա դրական ազդեցությունը ինչպես իրենց մասնագիտական զարգացման, այնպես էլ կազմակերպության հաջողության վրա:

Աշխատակիցների հմտությունների զարգացում

Թիմային աշխատանքի խթանումը նպաստում է աշխատակիցների հմտությունների զարգացմանը: Թիմային միջավայրում աշխատակիցները սովորում են միմյանցից, ինչը թույլ է տալիս նրանց ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ: Փորձառու աշխատակիցները կարող են փոխանցել իրենց գիտելիքները, ինչը նպաստում է ոչ միայն անհատական զարգացմանը, այլև կազմակերպության ընդհանուր առաջընթացին:

Այս գործընթացը նաև մեծացնում է աշխատողների մոտիվացիան և բավարարվածության մակարդակը, ինչի շնորհիվ բարելավվում են աշխատանքի որակն ու արտադրողականությունը:

Աշխատանքային համախմբվածության բարելավում

Թիմային աշխատանքի խթանումը զգալիորեն ամրապնդում է աշխատավայրի համախմբվածությունը: Երբ աշխատակիցները մշտապես համագործակցում են, ստեղծվում են ընդհանուր նպատակներ, աշխատակիցներն ավելի լավ են հասկանում միմյանց, մեծանում է վստահությունը, և նվազում են կոնֆլիկտները:

Սա դրական ազդեցություն է ունենում մի շարք գործոնների վրա, ինչպիսիք են՝ բացակայությունների քանակը, աշխատակիցների շարժունակությունը, աշխատանքային գոհունակությունը և սթրեսի մակարդակը: Այս ամենը ՄՌԿ ղեկավարներին հնարավորություն է տալիս ստեղծել առողջ, համախմբված և արդյունավետ աշխատանքային միջավայր[1]:

---

[1] Նյութի աղբյուրը՝ **The Importance of Teamwork in HR Management**
https://www.employeeconnect.com/why-teamwork-is-important-for-hr-management/

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ՄԵԼԱՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ